

Die Entstehungsgeschichte des Monotheismus, nach ihren quellen geprüft und dargestellt.—G. Owsophian. Leipzig, 1897 (Միակամութեան ծագման պատմութիւնը, իւր աղբիւրներով քննած և ներկայացրած. Վ. սարկ-Յովսէփեան. Լայպցիգ, 1897):

Մայր Աթոռոյս միաբան Ընորհ. Պարեգին սարկաւագի (այժմ՝ արեղայ) այս շարադրութիւնը, որով նա փիլիսոփայութեան գոկտորի աստիճան է ձեռք բերել, լոյս է տեսել արդէն ամիսներ առաջ բայց ուշ չենք համարում մի քանի խօսքով ծանօթութիւն տալ նորա մասին: մանաւանդ որ խօսքն այնպիսի մի հաղուագիւտ երեւոյթի մասին է: որպիսին է հայ մարդու: այն ևս հայ հոգեւորականի ու ս. Եջմիածնի միաբանի աշխատութիւնը Եւրոպական գրականութեան մէջ: Բարեշնորհ հեղինակը իւր աշխատութիւնը բաժանել է Վ. հատուածներէ: որոնցից Ա-ի վերնագիրն է՝ «Քաղաքական-Եկեղեցական հանգամանքները Բիւզանդական կայսերութեան մէջ մինչև Միակամութեան շարժումը»: և տալիս է ըստ այսմ համառօտ նկարագիրն այն վիճակի: որի մէջ գտնուում էր Բիւզանդիան Զ. դարի վերջում և Ե-ի սկիզբները՝ Հերակլ կայսեր նախորդների և նորա օրով: որով բացատրուում են միակամայից շարժման պատճառները:—Միակամութիւն ասուում է Զ. դարի վերջերը յառաջ եկած այն վարդապետութիւնը որ ընդունելով Քրիստոսի մէջ երկու բնութիւնն: բայց մի կամք՝ պէտք է Հերակլ կայսեր և նորա կողմնակիցների համար իրրև հիմք ծառայէր: միութիւն հաստատելու արևելքի մի բնութիւն և արևմուտքի երկու բնութիւն քարոզող եկեղեցիների մէջ:—Բ. և Վ. հատուածներով Հայր Պարեգինը քննադատում է այն յունական աղբիւրները: որոնցից տեղեկութիւն ենք ստանում այս շարժման սղընաւորութեան մասին: բաժանում է նոցա երեք գլխաւոր տեսակի: ցոյց է տալիս նոցա փոխադարձ յարաբերութիւնը: և թէ պատմական տեսակէտով որը որից նախապատիւ պէտք է համարել: Պատմագէտի համար այս մասն ի հարկ է ամենից կարևորն է: որ սխալն ու ուղիղը: գլխաւորն ու երկրորդականը որոշելով՝ միջոց է տալիս նորան նոր լոյս սփռելու պատմութեան մի մութ մնացած էջի վերայ: բայց հասարակ ընթերցողի համար ամենից հետաքրքիրն է Վ. հատուածը: ուր հեղինակը իւր հետազօտութիւններից եզրակացութիւն է հանում և տալիս է մի «Պատմական նկարագիր Միակամութեան մինչև Կարնոյ ժողովը (633)»: Այս հետազօտութիւններն ու նոցանից հանած եզրակացութիւնը առանձին նշանակութիւն ունին մեր եկեղեցւոյ պատմութեան համար: որովհետև զպիս յանգում են այնպիսի մի նշանաւոր խնդրի:

որպիսին է Եզր կաթուղիկոսի Հերակլ կայսեր հետ հաստատած միութիւնը Կարնոյ ժողովում: Իւր ուսումնասիրութեան միջոցին Հայր Պարեգինը աչքի տակ է ունեցել հարկաւ նաև հայկական աղբիւրներն և օգտուել նոցա տուած տեղեկութիւններից: բայց քանի որ նա այստեղ միայն մինչև Կարնոյ ժողովը տեղի ունեցած հանգամանքներն է պարզաբանում: չէր կարող առատ նիւթ վերցնել մեր գրականութիւնից: այլ պէտք է թողնէր այդ մի ուրիշ անգամի: երբ նորան կ'աջողուի ամբողջ շարժման պատմութիւնը՝ մասնաւորապէս հայկական հողի վերայ խաղացած դերը: ներկայացնել: Ինչպէս մեզ յայտնի է: նորա ներկայ աշխատութիւնն այդ ընդարձակ ծրագրի իրագործման յառաջարանն է միայն: իսկ ամբողջի համար պէտք է յուսալ: որ կրկին ձեռք կ'առնէ և յաջողութեամբ զլուիս կ'հասնէ: կրբ առաջին տարուայ ուսուցչի: պարտականութիւններից փոքր ինչ թեթեւացած կլինի և աւելի միջոց կ'ունենայ ազատ աշխատութեան: ներկայ գրուածքը բոլորովին զերծ չէ հարկաւ այն թերութիւններից: որոնք յատուկ են իւրաքանչիւր նոր սկսողի: ոճի անմատահութիւն: մտքերի հետևականութեան մէջ անհաստատութիւն: աւելորդ կրկնութիւններ և ըն. բայց պատմագրութեան համար լաւ ապագայ խոստացող և աւելի կարևոր արժանիք են ուղիղ կշռադատութիւն պատմական եզրութիւններն և փութաջան ճշգրտութիւն նոցա ժողովելու և զասւտորելու գործի մէջ: և այդ արժանիքն այստեղ չեն պակասում: Ինչ վերաբերում է հանած եզրակացութիւններին: նոցա իւր հաւանութիւնն է տուել գոնէ: մասնաւոր նամակով: այնպիսի մի հեղինակաւոր անձն: որպիսին է ուսուցչապետ Լօօֆսը: Եւրոպական մամուլի մէջ յայտնուած կարծիքներ դեռ մեզ չեն հասել:

Ն. Վ.

### ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ.

ՌՈՒՍՍՅ ԵԿԵՂԵՅԻ.

Ներկայ ուսումնական տարուայ սկզբից Կիեփի համալսարանում աստուածաբանութեան ուսուցչապետ կարգուած Սվէտլով քահանան: որ ներկայումս ուս գիտնական հոգեւորականութեան ամենահամակրելի ներկայացուցիչներից մէկն է: \* այն եււանդուն երիտասարդ գործիչներից մէկը: որոնք

\* Կնէկ որչափ մեծի անմամբ ծանօթանալ կարողացանի:  
Կ. Վ.

աշխատում են քրիստոնէական գաղափարները կամ եկեղեցւոյ վարդապետութիւնը մատչելի դարձնել կրթութեամբ գասին: Իւր առաջին հանդիսաւոր գասախօսութեան նիւթ ընտրել է՝ «Աստուածարանութիւնը համալսարանական գիտութիւնների շարքում»: որով նա դառնապէս դանդատուում է ուսական համալսարաններում աստուածարանական գիտութեանց այնչափ արհամարուած լինելուն դէմ և զորա պատճառներն է բացատրում: Мир, Отголоски [Թերթը ձայնակցելով դասախօսին՝ այդ երևոյթի գլխաւոր պատճառ այն է համարում: որ աստուածարանութիւնն այժմ արտաքոյ կարգի առարկայ է: ուստի և ուսանողների համար իբրև մի օտար և անօգուտ գիտութիւն:—1863 թուականի համալսարանական կանոնադրութեամբ նա պարտադիր էր բոլոր բաժինների ուսանողների համար: բայց վերջը կարևոր համարեցին ուսական համալսարանների կազմակերպութիւնը մտեցնել գերմանական համալսարաններին: առանց հաշուի առնելու: որ այնտեղ աստուածարանութեան համար առանձին բաժին կայ և որ ուրեմն աստուածարանութիւնը իւր կարևոր տեղն է բռնում հանրամարդկային գիտութիւնների շարքում: մինչդեռ Ռուսաստանում այդ պակաս է: և որովհետև աստուածարանութիւնը չի մտնում եղած բաժիններից ոչ մէկի մէջ: հետեւաբար անուշով միայն գոյութիւն ունի: և այն ժամանակ իրեն վայելուչ տեղը կարող է բռնել: երբ որոշ բաժնի կամ բոլոր բաժինների պարտադիր գիտութեանց շարքը մտնէ:

—Մոսկվայում և մի քանի ուրիշ քաղաքներում ձգտումն է յառաջացել հրապարակախօսութիւնների և եկեղեցական զրագարան-ընթերցարանների միջոցով աստուածարանական կամ կրօնական առարկաներ մատչելի դարձնել ժողովրդին: Այդ նպատակով Մոսկվայում արդէն մի քանի հրապարակախօսութիւններ են կարդացուել: որոնք վերաբերում են աղօթքի նշանակութեան, եկեղեցիների միութեան և նորա նպատող հանդամանքների, քրիստանէութեան էութեան և այլ նման խնդիրների: Մի քանի տեղերում արդէն ձեռնարկել են եկեղեցական ընթերցարանի համար շինութիւններ կառուցանել: Արոշուած է քահանաներին տալ մատենաներ: որտեղ նոքա պէտք է նկարագրեն իրենց ծխին պատկանող հաւատացեալների տնտեսական և բարոյական կեանքը: նոցա շրջապատող հանգամանքները և թէ՛ որպիսի պահանջ ունի այստեղի կամ այնտեղի քահանան: Այլ և Ռուսաց եկեղեցւոյ անցեալը ուսումնասիրելու համար կազմուել են զանազան ընկերութիւններ: Աւլօգտայի եկեղեցական-հնագիտական ընկերութիւնը: կարևոր համարելով Տոգևոր սեմինարիայի բարձր դասարանների աշակերտաց աշխատակցութիւնը: խնդրագրով դիմել է գպրոցական վարչութեան: որ թոյլ տայ

նրանց աշխատակցելու այդ ընկերութեան՝ մտնաւանդ ժողովրդական կեանքից նիւթեր հաւաքելու գործում:

—Ալեուտայի և Ալեասկայի եպիսկոպոս Սրբ. նիկողայոսը որ մեծ ծառայութիւն է մատուցել Ռուսաց միսիոնարական գործին Ամերիկայում: նորերս այցելել է նիւ-Իորկ քաղաքը: և այդ առթիւ հարց է զարթեւ եպիսկոպոսական սթոնն այդտեղ փոխադրելու: Երևի այդ հարցը շուտով կլուծուի: որովհետև նիւ-Իորկը ամերիկական կեանքի մէջ բոլոր շարժումների կենտրոնն է: և ուրեմն շատ յարմարութիւններ ունի նաև Օրթոդոքս եկեղեցւոյ համար կենտրոն լինելու: մանաւանդ որ վերջերս: շրջապատող տեղերը իւր հետ միացնելով նա դարձել է աշխարհիս երկրորդ ամենամեծ քաղաքը՝ 3/4 միլիոն բնակչով:

—Церк. Вѣстникъ [Թերթի թղթակիցը] կրօնի դասաւանդութիւնը քաղաքական գպրոցներում կանոնադրելու համար՝ անհրաժեշտ պահանջ է համարում այդ դասերն առնել ծխատէր քահանաներից և յանձնել առանձին քահանաների: որոնց պարտքը լինի միայն կրօնի դասատուութիւնը: Ծխատէր քահանան միաժամանակ չէ կարող երկու պարտականութիւններ կատարել: Երբ առանձին քահանաներ նշանակուին կրօնի դասատուութեան համար և որոշուի գոհացուցիչ ոտճիկ: այն ժամանակ բարձր կրթութիւն ունեցող մարդիկ աւելի յօժարութեամբ քահանայ կրճեռնագրուին: որով և մի ուրիշ կողմից նպատած կը լինին կրօնի դասաւանդութեան բարւոքման: Իսկ որպէս զի այս կրօնուսոյց քահանաները չը զրկուին եկեղեցւոյ սրբազան պաշտամունքներից: պէտք է գպրոցներին կից շինել եկեղեցիներ: որտեղ նոքա կը պատարագեն և այլ պաշտամունքներ կը կատարեն: իրենց աշակերտների ներկայութեամբ: Այդպիսով գպրոցում թերի մնացածը այնտեղ կլրանայ:

ՀԻՆ ԿԱԹՈՒԿԻՆԵՐ.

Անցեալ սեպտեմբերին հին կաթողիկոսների Ա. ինննայում գումարած համաժողովին: ինչպէս ժամանակին յայտնուեցաւ: ներկայ էր ի միջի այլոց՝ Նորին Պայտերական Մեծութեան խոստովանահայր և ս. սինօդի անդամ ա. քահանայ Լանիշև: ուր և կենդանի խորհրդածութիւնների առարկայ եղաւ հին կաթողիկոսների Օրթոդոքս եկեղեցւոյ հետ միութիւն հաստատուելու խնդիրը: որի մասին հայր Լանիշև մի շարք յօդուածներ գրեց Церк. Вѣстникъ-ի մէջ և մի քանի հրապարակախօսութիւններ կարդաց վերադարձից յետոյ: Այս միութեան համար եռանդուն աշխատողներից մէկն է Պատարի երկրասարդ երեց լից. Կէօց: որ յայտնի է իւր «Կիւրեղ և Մեթոդիոս» գրքով և մի շարք յօդուածներով: Օրթոդոքս Սլաւոն-

ների և հին կաթոլիկների փոխադարձ յարաբերութեանց վերաբերեալ.\*

Նորերս նա կրկին «Սլաւոններն ու հին-կաթոլիկութիւնը» վերնագրով մի յօդուած է հրատարակել «Միջազգային աստուածաբանական թերթի» մէջ, որ հետեւեալ խնդիրներն է դնում. «Հին կաթոլիկութեան էական յատկութիւնն է՝ ամուր պահել եկեղեցւոյ ազգայնութեան սկզբունքը և ճանաչել ըստ ամենայնի իւրաքանչիւր ազգութեան իրաւունքը՝ նաև կրօնական տեսակետից ունեցած առանձնութիւնները պահելու: Այս ընդհանուր սկզբունքը Սլաւոնների նկատմամբ գործ դնելով, Հին կաթոլիկութիւնը կարող է զիտնական ճանապարհով ապացոյցանել, որ հին կաթոլիկ եկեղեցին հաւատով և հոգեով շատ աւելի մօտ է այն հիմունքներին, որոնց վերայ Կիւրեղ և Մեթոդիոս հաստատել են Սլաւոնական եկեղեցին, քան այսօրուայ Հռոմէական եկեղեցին, եթէ ուրեմն Հռոմի հետ միացած Ռուսիները և Հռոմի իրաւասութեան ներքոյ գտնուող կաթոլիկ Սլաւոնները (Աւստրիայում) Հռոմից անջատուին և հին կաթոլիկական ազգային եկեղեցիներ կողմեն՝ այդ կլինէր վերագարձ դէպի այն հայեցակէտը, որ ունէին Սլաւոնների առաքեալները:»

ԿԱԹՈՒԻԿ ԵԿԵՂԵՑԻ:

Պապականութիւնը իւր գոյութիւնը պահպանելու համար ինչպէս յայտնի է, ամենայն միջոց արդարացնում է, եթէ մինչև անգամ հակաքրիստոնէական մի միջոց լինէր այդ: Այդպիսի զօրեղ միջոց են օրինակ համարուում այժմ նորանոր կաղմակերպուող աշխարհական ընկերութիւնները, որոնց սկզբունքն է՝ կենսք պապի հետ մահ պապի հետ: Միլանում մօտ օրերս մեծ շուքով կատարուած Ամբրոսեան տօնին, իցոյց էին տրուել վերջին ժամանակներում յանուն պապական շահերի կաղմակերպուած Իտալական այգպիսի ընկերութիւնների զբոշակները. միայն վերջին տարուայ ընթացքում յառաջ եկած զանազան կարգի ընկերութիւնների թիւը հասնում էր 2304-ի: Սորա իրենց, յանուն պապական շահերի կաղմուող, աղմկալից նիստերը և երաժշտական երեկոյթները գումարում են սոփորարար եկեղեցիներում, և մինչև այժմ Իտալիոյ 270 եպիսկոպոսներից միայն մէկն է գլուխուել, որ խտիւր արգելեց իւր իշխանութեան տակ գտնուող եկեղեցիներում այդ տեսակ ժողովներ գումարել և Աստուծոյ տան կամարները վայրենի

ծափահարութիւններով զղրղեցնել: Գա Կրեմոնի եպիսկոպոս Գեր. Նրեմիա Բօնօմէլլին էր, որի վերայ ամեն կողմից յարձակուեցան լրագրական գործիչ քահանաները և նորան պապի հակառակորդ հռչակեցին: Նկատելու է, որ Կրեմոնի թեմից ոչ մի զբօշակ չկար Միլանում Ամբրոսեան տօնին, և այդ հանգամանքը պակաս առիթ չէր բազմազմի ակնարկներով թշնամանելու արժանայարգ հօլուին: Թէև այս յարձակումները յակնած յանուանէ չէին, բայց սլաքներն այնքան որոշ ուղղութիւն ունէին, որ Գեր. հայրը ստիպուած եղաւ յայտարարելու, թէ քահանաներն իրաւունք չունին խառնուել եպիսկոպոսի կարգապրութեանց մէջ:

—Ներկայ թուականի յունուար մէկին Ա.Ն.ժ.Գ. իւր առաջին պատարագի վաթսուհամեայ յորելեանը կատարեց, և այդ աթիւն ի թիւս ուղոց թանկագին ընծաներ ստացաւ եւրոպական միապետներից: բայց ուխտադնացութիւններն ու տօնախմբութիւնները յետաձգուած են մինչև մարտի 2-ը, երբ Պապը իւր ծննդեան և քահանայապետական ձեռնադրութեան տարեդարձ պէտք է կատարէ միտեղ: Իսկապէս նորա ձեռնադրութեան տարեդարձը Փետրուար 20-ին է, երբ քահանայապետութեան 20-րդ տարին պէտք է մտնէ: Ս. Պետրոսից մինչև Ա.Ն.ժ.Գ. հաշուած բոլոր 263 պապերից միայն 11-ը քսան տարուց աւելի են իշխել, և ինչպէս յայտնի է, միայն նախորդ Պիոս Թ., անցաւ Պետրոսեան թիւը՝ 25 տարին: Մնացածների համար միջին թիւը եղել է 4-5 տարի:

—Լիոնում կայացել է նորերս Բրիտանեայ սահկայիների համաժողովը, որ նպատակ է դրել մրցել շեփամանակից հեթանոսամիտ և հրէամիտ ուղղութեանց, բողոքականութեան և ֆրանկմասոնութեան դէմ: «Նոցա պարագլուխ են քաղաքականութեան մէջ նշանաւոր դեր խաղացող հոգևորականներ, ինչպէս Գըհան, Լըմիր (այգպային պատգամաւոր), Նոզէ և Գարնիէ (քրիստոնեայ-համայնականների պարագլուխը Քրանսիայում):»

—Նոյն տեղում, կարգինալ-արքեպիսկոպոսի ներկայութեամբ, եկեղեցական հանդիսով հաստատուեց «Գթութեան Աստուածամօր» արտոց եղբայրութիւնը, որի նպատակը պէտք է լինի Անգլիոյ ի կաթոլիկութիւն դարձի համար աշխատել: Այս դէպքում կարգացուել է նաև առաջին անգամ՝ պապի յատուկ նոյն նպատակի համար պատրաստած, հետեւեալ աղօթքը. «Ո՛վ ամենբրջանիկ Այոս Սարիամ, Սայր Աստուծոյ, մեր թագուհին և մեր քաղցր մայրը, դարձուր բարութեամբ քո հայեացքը դէպի Անգլիա, որ քո յածիմին է կոչուած, շրջիւր նոցա դէպի մեզ, որոնց դու այնքան մեծ վստահութիւն ես ներշնչում: Քեզանով տրուեցաւ մեզ Քրիստոս աշխարհի Փրկիչը, որպէս զի նա լինի մեր յուսոյ յենարանը, և դու՛ դու տրուեցար մեզ

\* Այս ամառ նա Կիւի կը եկի Ռուսաց եկեղեցական կեանքին ի մօտոյ ուսումնասիրելու ուր մեկ ծանօթացմիկ եւ մեր նպատակները վրայցնելով մի քանի շաբաթ միտասին անցրին:

Փրկչի միջոցաւ, որպէս զի քեզանով աճէ այդ յոյսը, Ազօթիւր նոյնը մեզ համար, ո՛վ Մայր Յաւուցոյ որ մեզ ընդունեցիր խաչի պատուանդանի մօտ իրբև քո որդիների, միջնորդ եղիր մեր բաժանեալ եղբարց համար, որպէս զի միանան մեզ հետ ի մի ճշմարիտ հօտ, մի լինին բարձրագոյն Հովուի հետ, որ քո Արդւոյ փոխանորդն է երկրի վերայ: Ազօթիւր մեզ բոլորիս համար, ո՛վ բարի մայր, որպէս զի բարի գործերով պտղարեւած հաւատի միջոցաւ արժանի լինինք ամենքս՝ տեսնել Աստրծուն քեզ հետ երկնային հայրենիքում և օրհնել նորան յաւիտեանս, ամէն: — Բացատրութիւնների պէտք չկայ, ահա թէ ինչպիսի ամեն մի ճշմարիտ քրիստոնէի կրօնական զգացումը վերաւորող, երեւոյթներ կան Հոռոմեական եկեղեցւոյ մէջ:

— Պայը մի նոր շրջաբերական է հրատարակել՝ ուղղուած Պանագայի եպիսկոպոսներին, որ դո՛ւմ է նոցա բողոքը՝ կրօնի գաստուութիւնը գպրոցներից հանելու օրէնքի դէմ, և յորդորում, եթէ այդ օրէնքը վերացնելու համար նոցա ջանքերը զուր կանցնեն՝ ամեն հնար գործ գնել այն ժամանակ, պետութիւնից անկախ կաթողիկական գպրոցներ բանալու:

— Նորերս պային ներկայացել է «Revue de deux Mondes» յայտնի թերթի խմբագիր Բրունտիերը, որ Հոռոմէ գնացել նիւթեր ժողովելու համար, որպէս զի Ջուլայի նշանաւոր «Հոռոմ» վէպի դէմ հերքում գրէ, Այդ նպատակով նա այցելել է նաև մի շարք նշանաւոր կարգիւնալների և այլ եկեղեցականների:

— Հոռոմ էր գնացել նաև ֆրանսիական Հին կաթողիկոսների պարագլուխ անուանի Հայր Հիացէնթը, որի հետ այդ առթիւ բանակցութիւններ են եղել կրկին Հոռոմեական եկեղեցու ծոցն ընդունուելու, Գլխաւոր արգելքը որ յառաջանում է Հայր Հիացէնթի ամուսնացած լինելուց, շատերը կարելի են համարում նորանով վերացնել, որ նա պայի հաճութեամբ արևելեան հոռոմեադաւանների մի ծէս ընդունի, ուր հոգևորականների ամուսնութիւն թոյլ է տրուում: Բայց հարց է՝ եթէ նոյն իսկ պայը քաղաքական տեսակետներով այդ թոյլ տար, կարո՞ղ է Հ. Հիացէնթ անսխալականութեան և այլ խնդիրների նկատմամբ իւր ունեցած հակահոռոմեական համոզումներն հեշտութեամբ թողնել:

— Աւետարանական հասանքը ինչպէս երևում է ներգործում է կաթողիկ եկեղեցւոյ վրայ, մանաւանդ մի քանի կաթողիկ երկիրներում: Այժմ Փարիզում բողոքական աստուածաբանութիւն սովորող ուսանողների մէջ կան 5 նախկին կաթողիկ քահանաներ (Մօրօ, Նիցերա, Փիլիպպօս, Շեֆֆեր, և Ախալօս) և մի նախկին Յիսուսեան կրօնաւոր (Օպերա): Աստուածական կաթողիկ քահանայութեան մէջ անկախութեան յուզումներն այնքան են աճել,

որ անգրընտնականները (ultramontane) հարկ են համարել առանձին լրագիր հիմնել՝ «Ճշմարտութեան ձայն» (Voix de vérité) անունով, ինչպէս իրենք են ասում: Բողոքականութեան գործունէութիւնը մերկացնելու համար, Այդ թերթը ազդարարում է, թէ «16-ր դարու յեղափոխութեան յատուկ հին յամուտ, պարսաւումը և կոռուսէր ոգին նորից զարթել է»:

— Նորերս նոյն իսկ Հոռոմում լոյս տեսաւ մի թերթ «Նոր Հոռոմ» (La nuova Roma), որի մէջ կաթողիկ հոգևորականները բողոքում են, Յիսուսեանների տիրապետութեան շնորհիւ, կաթողիկ եկեղեցւոյ մէջ յառաջ եկած հոգևոր անկման դէմ: Թերթի մի որոշ մասը կրում է «Ազատութիւնը պայականութիւնից» վերնագիրը: Իւրաքանչիւր համարում հրատարակում են կաթողիկ հոգևորականներից ստացուած բազմաթիւ գրութիւններ, որոնցով շնորհաւորում են այդ ձևանարկութիւնը:

— Աւետրիայում ևս շարժում է հակահոռոմեական ոգին, Գեկտ. 11-ին ի պատիւ տեսուչ Պրոֆ. Տօլզի գրեթէ ամբողջ ուսանողական միութիւնը համալսարանում մեծ ցոյց արեց և շնորհակալութիւն յայտնեց նրան իւր նշեմքների վերջին՝ սկազեմիայի ազատութեան և Գերման ժողովուրդի պոչտպանութեան նկատմամբ արտայայտած եռանդի համար, Երբ տեսուչ Տօլզը պատրաստուում էր հեռանալու, խօսք խնդրեց բժշկութեան ուսանող Քեօզիշ և Ճառեց, Ճառը թէև ուսանողական էր, բայց արդարացի հետաքրքրութիւն շարժեց, որովհետև նա խօսում էր այն հոսանքների մասին, որոնց այժմ յաճախ կարելի է պատահել Աւետրիայի Գերման ժողովուրդի մէջ, Քեօզիշ որոշեց Հոռոմի դէմ մղուելիք պատերազմի անհրաժեշտութիւնը հետևեալ նախադասութիւններով. «Եթէ մենք Հոռոմի դէմ դեռ ևս վերջնականապէս չենք մաքառում, կնշանակէ միայն որ առ այժմ օգտակար չենք համարում: գերմանական ժողովրդական ուսանողութիւնը սակայն ամենայարմար վայրկեանի է սպասում՝ մի աչքի ընկնող օրինակով ցոյց տալու իւր ազգին թէ նա ինչպէս պէտք է ազատէ իրեն մահացութեամբի Հոռոմի շղթաներից՝ նոյն իսկ գերման բողոք, եկեղեցւոյ մէջ հազար անգամ աւելի ազնիւ, ազատ, մանաւանդ թէ ժողովրդական, դաստիարակութիւն ստանալու համար»:

— Ֆրանսիայում այժմ գտնուում են 3,275 վանքեր, որոնք 905 կարգեր են կազմում: կոյսերի թիւը հասնում է 58,836-ի: Այսչափ վանքերից 46-ը միայն հիւանդներ խնամելու, 2800-ը կրթութեան են նուիրուած, իսկ 12-ը հայեցողական կեանք են վարում:

— Ֆրայբուրգի կաթողիկ համալսարանը մօտ ժամանակ կկորցնէ միանգամից 10 պրոֆեսորներ, Առաջուց արգէն յայտնի էր, թէ այնտեղ անգր-

լեռնական տարրը այնքան մեծ ազդեցութիւն ունի որ Ֆրայբուրգի համալսարանը մի վանական գպրոցի կերպարանք էր ստացել, ուր ամեն ազատ ոգի և կրօնական ներդաժութիւն հալածուում էր: Սկզբում Գոմինիկեանների հետ կային նաև աշխարհական պրոֆ.-ներ: Բայց նոքա մէկը միւսի ետևից ճանապարհ տրուեցան և նոցա տեղերը կղերականների յանձնուեցան: Արդէն ուղղում էին հետացնել Հարգի և Նոստէս պրոֆեսսորներին, ուսձկից զրկելով, բայց կառավարութիւնը նպաստ տուաւ, և նոքա մնացին: Մի քանի ժամանակ յետոյ Վելլաւսցիութեանը հրատարակեց իւր Ֆրայբուրգից ստացած մի նամակը, որի մէջ Գոմինիկեանները հերքում էին իրենց վրայ բարգուած մեղադրութիւնները: Սակայն ամեն բան պարզուում է այժմ այն համագամանքով որ բոլոր գերմանացի պրոֆեսսորները ձմեռնային շրջանը վերջացնելուց յետոյ կհեռանան համալսարանից:

ԲՈՂՈՒՅԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՆԵՐ:

Գերմանիա.

«Մեր որբանոցներն արևելքում» վերնագիրն է կրում մի պատկերազարգ նկարագիր գերման օգնող դաշնակցութեան արևելքում հաստատած որբանոցների, որ յարմար կողմեր ունի խնդրի համար հետաքրքրութիւն զարթեցնելու: Այն բուլղորը ինչ որ վերարկուում է որբերի խնամատարութեան, որբանոցներին, գերման բարեգործներին, խնամակալներին և խնամակալուհիներին, ի նկատի է առնուած այստեղ: Մէջ են բերուած որբանոցների մի շարք պատկերներ, իրենց բնակիչներով և ուսուցիչներով:

— Բերլինի մէջ վերջին տասնեակ տարիների ընթացքում 10,000 ամուսնացողներին ընկնում է տարեկան միջին թուով 31,92 ամուսնալուծութիւն: Ամենամեծ թուով ամուսնալուծութիւններ տեղի են ունենում Ուտահում (96) և ամբրիկական միւս 9 պետութեանց մէջ (75,1—33,5): Նոյն իսկ վատահամբալ Փարիզում՝ ներկայումս տիրող օրէնքի մուտքից, 1884-ից ի վեր, 10000 ամուսնացողներին ընկնում է միայն 21,2 բաժանումն: Եւրոպայում Բերլինի չափին մասամբ ինչ մօտենում է Համբուրգինը, ուր 10,000-ին ընկնում է 26,7:

— Գեկտեմբերի 15-ից ի վեր լոյս է տեսնում «Հաւատք և կեանք» վերնագրով մի նոր աւետարանական թերթ, որ իւր առաջին համարի մէջ յայտարարում է հետևեալը. «Նոր գպրոցը (աստուածարանութեան), որ անփիճելի տաղանդի տէր ներկայացուցիչներ ունի՝ կամայ ակամայ դէպի և կեղեցիների կործանումն է տանում: Ժամանակ է ցոյց տալ, որ զեռ ևս կան աստուածարանների, երեցներ և աշխարհականների, որոնք հաւատում են:

Թէ աւետարանական գաղափարները դրական ինչ են, որոնք հաւատում են մարգեղութեան, յարութեան և քաւութեան, որոնք այն համոզուանքով են ապրում, թէ քրիստոնէութիւնը առանց դաւանանքի և հրաշքների այլ ևս քրիստոնէութիւն չէ: Սոյն համարի ճակատը զարդարող Ֆ. Պ. Գուլմերգ, Էմիլ Գուլմերգ, Հէնրի Բոյիս և ուրիշ անուններ երաշխաւոր կարող են լինել, որ թերթը յաջողութիւն կունենայ:

Անգլիա.

Թէ որչափ անտեղի կերպով Անգլիայի եսական քաղաքականութիւնը վերագրում են Անգլիական ամբողջ ազգին, ապացոյց են այն մեծ զոհողութիւնները, որ արեւ է վերջինս յօգուտ միսսիոնարական գործի: Օրինակ վերջին հաշիւներից երևում է, որ 1996 թուին նա 15 միլիոն ուուրլի է նուիրել հիթանոսների մէջ քրիստոնէութիւն քարոզող զանազան ընկերութիւնների:

Առհասարակ նկատուած է, որ Անգլոսաքսոնական ցեղը աւելի բարոյական և խոհուն աշխարհայեցողութիւն ունի քան արևմտեան միւս ազգերը:

Ահագին զոհողութիւններ են անում նոքա նաև կրթական գործի համար: Անգլիայում և Ամերիկայում բազմաթիւ հանրօգուտ հիմնարկութիւններ և նոյն իսկ համալսարաններ հիմնուում և ապահովուում են մասնաւոր մարդկանց կտակներով: օր. վերջին ժամանակներս Հիւս. Ամերիկայի Բալտիմոր քաղաքում մի հարուստ անգլոսաքս. Զոն-Աոմիգենս անունով, 34 միլիոն դրամազլուխ է յատկացրել մի համալսարան և մի հիւանդանոց հիմնելու և ապահովելու համար:

Չուիցիլիա.

Ժընևում զանազան եկեղեցիների պատկանող քրիստոնեանների ներկայ փիճակը շատ աննախանձելի է, շնորհիւ այն ներքին վէճերի, որ նոքա մղում են միմեանց դէմ: Այդ վէճերի մէջ խառն է նաև քաղաքականութիւնը, մինչև իսկ խուլփարար անասուածների մի խումբ, շայնելով իւր փոքրամասնութեան, զլխաւոր դերն է խաղում այդ եկեղեցիներով ու մատուանրով հարուստ քաղաքի մէջ, ուր երբեմն քրիստոնէական բարեգործութիւնը այնչափ արդիւնք է ցոյց տուել:

Այժմ Հին կաթոլիկներն են բուն ազգային կաթոլիկներ համարուում: Բայց նոքա սկսել են արդէն տեղի տալ Հռոմէական կաթոլիկների մեծ հոսանքի առաջ, և զարմանալի չէ, որ քաղաքի ամենամեծ եկեղեցին՝ սուրբ Աստուածածինն ևս վաղ թէ ուշ նոցա ձեռքն անցնի: Ամանք կարծում են, թէ վերջիններս մինչև իսկ բողոքականների ս. Պետրոս եկեղեցին կարող են ձեռք ձգել: Սակայն

ամենախոհեմն այն կլինէր ի հարկ էլ որ բոլոր բրիտանացիները միանային ընդհանուր թշնամու անհաւատութեան դէմ կուռելու համար:

ԲԱԹԻՆ ԷՆԹԱՆՈՍԱՅ.

Ասիա. — Գերմ. բողոքականների 2ֆրանկան ներքին առաքելութիւնը 16 նահանգներում 140 կայաններ և 137 արտաքին տներ ունի որոնց մէջ 6113 հաղորդակիցներ է ժողովել, Վերջին տարին միտուել են 1269 հեթանոսներ, Ծառայութեան մէջ են 646 քարոզիչներ և քարոզչուհիներ և 190 թողախաւոր բնիկ օգնականներ, 42 նորագացի աշխատակորներ սեփական ծախքով են կառավարուում: Առաքելութիւնն ունի 226 զիշերութիկ աշակերտներ և 851 երթևեկի, 5 քարոզչական հիւանդանոցներով և 19 զեղարաններով, որ աշխատում են հիւանդների վրայ ազգել, 1896-ին հասցեթը բարձրացաւ մինչև 877,000 մարկ:

Ամերիկա. — Աֆրիկայում այժմ հաշուում են 438 լեզուներ և 153 գաւառաբարբառներ, որոնցից 81-ը միայն ամբողջ ս. Գրքի կամ նրա մի քանի մասերի թարգմանութիւնն ունին, 500-ը նոյն իսկ այբբենարան չունին: Միայն Վուզանում բնակուում են 60 միլիան հեթանոսներ, առանց մի մասիանարի որ իրենց լեզուն իմանար: Այդպիսի թուերը պարզ ցոյց են տալիս ինչպէս իրաւացի կերպով նկատում է Լայպցիգի քարոզչական թերթը, որ ամերիկական և անգլիական քարոզչական շրջանների նշանաբանը՝ «Աւետարանի քարոզչութիւն ամբողջ աշխարհի մէջ ներկայ սերունդի օրով» ցնորք է:

տեղ էր նաև «մեծաշնորհ և տիեզերահամբաւ սուրբ և զերապատիւ առաքելոյն Անտնիայի և սուրբ Գեորգայ» վանքը, ուր 1418 թուին գրում էր իւր յիշատակարանը Մկրտիչ անունով մի սարկաւազ, որ կարծուում է թէ Նաղաշն է: \* Յիշատակագիրն իւր գրած Յայտմաւորքն անուանում է Վարմեհրակ և յուսարոքի կտակ է իրեն համար այսպէս է խօսում: «Վեղաւամբ և տարտամ ոգի Մկրտիչ գրիչս որ կոչիմ սարկաւազս ասում է: Բայց բացասութեամբ և ոչ ստորասութեամբս զի գործով և խորհրդով ևս վատթարագոյն գտանիմ քան զամենայն որ ի ոսկիաց և զարտուղի մարմնական գնացիքս: քանզի շնչմովս զանազան սպախառն փորձութեանց շուրջ զմեզ մածկալ կայ, եւ սխիս անկեարիւն և անշուքիսն ձգի, կարիս ի մտիս, եւ անտարիսն մերձ, ճուրարիս խաւրեցուցի, եւ անտարիսն պատկազ զմեզ:» Այս խօսքերըն ակնարկներ են երիտասարդական հասակին յատուկ թուլութիւնների՝ «անմտութիւն մերձ, ճուլութիւն խաւարեցուցիչ և անարիութիւն», որոնց շնորհիւ նա կարող էր սխալներ անել, ուստի խընդրում է անմեղապիւր լինել և արանջում է իւր ժամանակի վատութեան վերայ: «Ի մեծ սարախոսանս կայի, ասում է, վասն զանուութեան ժամանակիս և աւերման աշխարհիս: Բայց աւելի մեծ վիշտ է զգում ազգի ցաւերի մասին: «զազգիս մերոյ տառապանս ո՞վ կարէ պատմել, քանզի ի բազմաւալ մեղաց մերոց փակեցաւ դուռն ողորմութեան Ատուծոյ և պատուհանք բարկութեան բացան»: Այդ էր Գառնեցի Պօղոս Բ. կաթողիկոսի ժամանակ (1418—1430 թ.), եթէ արդարև Գրիչ սարկաւազը Մկրտիչ Նաղաշն է, որ հաւանական է երևում աչքի առաջ ունենալով յիշատակարանի մէջ յայտնած զբացմունքները, ապա ուրիմն նա իւր սկզբնական դաստիարակութիւնն և ուսումն առել է վանքի մէջ և բաւական վարժ է եղել գրոց բարբառին, Նորա կեանքի այլ հանգամանքները մեզ ճանաթ չեն. գիտենք, որ 1430 թուին Վահկացի Աստանդին և կաթողիկոսը Սիւ քաղաքում ձեռնադրեց նորան եպիսկոպոս: այդ ժամանակ Մկրտիչ Նաղաշ Ամիգ քաղաքի (Տիարբէքիլի) Հայոց առաջնորդ էր: \*\* Յայտնի է նաև այն որ նա ծաղկելու և նկարելու արուեստ ունէր: Մեծօրայ վանքի մի ձեռագիր ժամագրքի մէջ, որ գրուած է 1432 թուին, յիշատակագիրն ասում է: \*\*\* «այլև յիշել ազաշեմ զերջանիկ և զերանաշնորհ զսրբի կայսկապառն սր Մկրտիչ Ամրայ, որ երջենային գուեով և զանազան երանգով զարդարեաց զսուրբ զիտիս առ յիշատակ բարեաց հոգեոյ իւրոյ և ի պատմարս օրինակի սանս արեւելեանս: այս տեղեկութիւնից



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

ՄԿՐՏԻՉ ՆԱԳԱՇ

«Ղարիպ, սիրոյ մի նկար. Այս դիմար օրերս անցնի:»  
Մ. Նաղ.

Մկրտիչ Նաղաշ ծնուած է Պոս \* զի զուում որ Բաղէշ քաղաքի հիւսիս արևելեան կողմն է ընկնում Ս. Ամբրոզու (Ամբրոզու) վանքից ոչ հեռու այդ

\* Այս գրիչի տնունն յիշում է ճին յիշատակարաններում, որ կարելի է տեսնել Նոստր Հայոց եր. 56 և 213, եւ Թարսս աղբար Բ. 495.

\* Նոստր Հայոց եր. 55.  
\*\* Չամչեան, Պատմ. Հայոց. Գ 466.  
\*\*\* Յուզակ հայ մեծ. արք. մասնակ. Միւնիսթի (Վիեննա) 12, ր.